

միոյն բիւրապատիկ չնորհացէ նոցա պարգեւ եւ թողութիւն. յանցանաց Քս. Ած. յոյսն ամ. արարածոց ի հանգերձեալ դատաստանին, ամէն. որում փառք յաւիտեանս ամէն:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. 48.

(Ձեռ. No. 1016/1027. Բ. Գրքի երես 126)

173բ. Փառք անբաժանելի եւ միասնական սբ. երրորդութեն. եւ մի ածութեն. հաւր եւ որդոյ եւ հոգոյն սրբո. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե. Որ ետ կարողութիւն. անարհեստ եւ փցուն գրչի հասանել ի վերջին գիծդ ածարողրջ. տառիս, որ կոչի յանուն սբ. հայրապետին Մաշտոցի: ի թուարեւութես. հայկազեան տաւմարիս: Աէ. ձեռամբ յոգնամեղ եւ փցուն գրչի Յոհանէս սուտանուն արեղայի, //

174ա. որ զանունս միայն ունիմ եւ ոչ զգործս: ի վանքս որ կոչի Յայրիվանս, ընդ հովանեաւ ամէնաշեալ. ս. լուսոյ մաւր սբ. Ածածնիս եւ սբ. տիգրիս ածամուխ սբ. Գեղարդեանս եւ այլ բազմագումար սրբոցս, որ աստ կան հաւաքեալ, ի վայելումն անձին Յակոբ քհն. եւ զաւակաց իւրոց, եւ յիշատակ ծնողաց իւրոց:

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ես անարժան զծողս Յհնս. որ հողս եմ եւ փոշի ոտից ձերոց, որք հանգիպիք ամայ տեսանելով կամ կարգալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս զանպիտանս Յոհնէս (Տ!) եւ զծնողս իմ ըստ մարմնոյ եւ զհոգեւոր մայրս իմ զԱնպար, որ բազում երախտիք ունի ի վր. իմ. Ած որդորմի նմայ ասացէք ամէն: Ընդ նմին եւ զայլ եղբարքս յիշեցէք:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. 49.

(Լազարեան Ճեմարանի No. 9=1159 էջմ.)

Բ. Գրքի 127.

349բ. Ձստացող սբ. գրոցս զԱծատուր. քհնյն. եւ զծնողսն իւր՝ եւ զանպիտան գրիչս զՄաթս. յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր, ով սբ. եղբարք աղ:

Ներքեւի լուսանցքում սրա տակն աւելացրած է.

Նաեւ զեղկելիս զՍատեփանոս՝ ծաղկաւղ սբ. գրոցս, կազմաւղ՝ եւ զծնաւղսն մեր յիշեալիք աղչ:»

357բ. Շնորհալու Հոգեգալստեան նուիրած ներբողից յետոյ՝ կցուած է.

Ով պատճառ կենդանութե. եղելոցս եւ խաղաղար աշխարհի՝ Ած. սբ. հոգի, որ այսաւր ի հրեղէն

լեզուս բաժանեալ՝ հանգեար ի դասս երանելի առաքելոցն գնդի: Ողորմաւորացս եւ դաւանողացս զքեզ Այ. հոգի, անեղութիւ. անսկզբնաբար բղխումն ի հաւրէ, համադոյ եւ համապատիւ, էութիւ. եւ արարչութիւ. ընդ հաւր եւ ընդ որդւոյ միաւորեալ բնութիւ.՝ երկրպագելով հայցեմք: Ողորմեայ ստացաւղի այսմ. ածաչունչ. բուրաստանիս, Ածատուր. քհն. եւ ծնաւղաց նորա՝ եւ ամ. արեան մերձաւորացն. Ամէն:

Նաեւ տառապեալ ոգւոյ եւ անարհեստի եւ փրծուն գրչի Մաթսի. եւ ծնաւղացն իմոց եւ երնխտաւորացն եւ մեր վարժապետացն ամէն: Վս. զի ի քո բազմապեղ ներողութիւ. ապաւինելով մեծաւ յուսով զսա ստացաւ նաւակ լաստի հանելով ի յայս բազմաբղխես (եալ?), կոհակուտեալ աշխարհ ծովուս մեղանաց՝ ի նաւահանգիստ հաւրն Քի. զոր խոստացաւ էակիցն քո միածինն որդի, թէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի՝ եւ եթէ եկայք առ իս ամենայն աշխատեալք՝ եւ ես հանգուցից:

Նա եւ որ բարեմիտ զամէնն ասացէ սիրով, եղիցի եւ նոցա յիշատակ բարի ի յայսմ ատենի:

551ա. Զի որպէս ուրախութիւ. մեծ է նաւելոցն ի նաւահանգիստն ժամանել: Սոյնպէս եւ զրչին՝ ի վերջին կէտն: Վասն որոյ գոհացողական ձայնիւ քեզ փառք, պատիւ եւ երկրպագութիւ. վերառաքեմ ամենասբ. երրորդութիւն՝ հայր եւ որդի եւ սբ. հոգի: Այժմու ժամանակի եւ անդրաւ յաւիտենիս որ եւ զանարժանութիւ. իմ արժանի արարեր հասանել ի վերջին գիծս տառիս եւ ի կատար հոգելից բուրաստանիս ամէն. որ զամէն ասէ ամեն:

551բ. Վերջին մեծ յիշատակարանն է.

Վասն յիշատակարանի գրոցս.

Փառք ամենասբ. ամենապաւր եւ կենդանարար սբ. երրորդութեն. հաւր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ եւն.

(Բացատրում է, թէ ինչ պատճառներով մարդիկ բարի գործ են կատարում, պատմական ոչինչ չկայ. շարունակութիւնն է «Երկոտասաններորդ» եւն.)

Երկոտասաններդ վասն ի նախանձ եւ ի փափագ շարժելոյ զայլս ճշմարիտ արդեանց եւ բարի գործոց, որպէս ասէ Պաւղոս, նախանձաւոր լերուք շնորհացն, որ լաւն են. ի խնդրոյ եւ յարդեանց երիցս երանեալ երջանիկ այրս այս Ածատուր. արեղայ վերաձայնելոյ: Առ որ մեծաւ փափագմամբ ցանկացող եղեւ այս ածաչունչ. մատենի եւ անգին մարգարտի, որ կոչի տարէ գիրք: Յուսալով ի բան մարգարէին, որ ասէ, երանի, որ ունիցի զաւակ ի սիրովն եւ ընդանի վերինն Եմ. եւ ի բանն որ ասէ, գանձեցէք զձեզ զգանձ յերկինս, որ ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ:

Եւ պատուականս այս Ածատուր. մահապի քհնյս. ըստ այսմ յուսոյ եւ պայմանի ի հաւալ ընչից իւրոց